26. 483

Պատմագրություն

334.7
Կ-21

334-7
4-21

15 JAN 2010

ՆԱԽԱԳԻԾ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

*Հ. Ս. Խ. Հ. Կենտ. Գործ. Կոմ-ը և Ժողկոմխորհը վորոշեցին։*

*Գյուղացիների լայն շրջաններում համայնականությունը զարգացնելու և ամրացնելու նպատակով, վորպեսզի հնարավոր լինի սակավազոր գյուղացիների և կարմիր բանակայինների տնտեսությունները, այլև կարիքի մեջ (նեղը) ընկած մյուս քաղաքացիներին ու տնտեսություններին ոգնություն հասցնել և պաշտպանել շահագործումներից, ինչպես և ինքնագործունեության հիմունքներով գյուղացիական բնակչության շրջանում համայնական փոխադարձ ոգնության կազմակերպելու նպատակով՝ ավաններում, գյուղերում և գյուղաքաղաքներում սահմանվում յեն (կազմակերպվում յեն) Գյուղացիական Փոխադարձ Ոգնության Ընկերություններ, վորոնք գործում յեն հետևյալ հիմունքներով։*

17 MAY 2013
26483

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ (ԿԱՆՈՆՆԵՐ)

1. Գյուղական գյուղացիական Փոխադարձ Օգնության ընկերությունները հաստատվում յեն գյուղի այն բնակիչների ընդհանուր ժողովի վորոշմամբ, վորոնք համաձայն Հ. Ս. Խ, Հ. սահմանադրության իրավունք ունին բանվորա-գյուղացիական խորհուրդներում պատգամավորներ ընտրելու:

2. Գյուղացիական Փոխադարձ Օգնության ընկերությունները օգտվում հաստատվում յեն իրավաբանական դեմքի (տես կետ 3) իրավունքներով և իրենք յեն անօրինում իրենց գործերը, առաջնորդվելով Սոցիալական Ապահովության Ժողովրդական Կոմիսարիատի հրատարակած օրենքներով և ընդհանուր կարգադրություններով, ցուցմունքներով ու հրահանգներով: Սոցիալական Ապահովության Ժողկոմատը իրավունք ունի իր տեղական մարմինների միջոցով կասեցնել և վերացնել գյուղ. Փոխ. Օգնության Ընկերության այն կարգադրություններն ու վորոշումները, վորոնք խախտում յեն գոյություն ունեցող այլև սահմանված յեղանակով հրատարակված օրենքները:

3. Գյուղ. Փոխ. Օգն. Ընկերությունը, պահպանելով Խորհրդ. Իշխանության գործող օրենսդրություններն ու կարգադրությունները, իրավունք ունի գնելու ի սեփականություն օգտագործումն, ինչպես և գրավ դնելու ու վաճառելու (օտարացնելու) իրեն պատկանող ամենայն մի գույք, նույն թվում և շենքերը, ստանալ ի օգտագործումն և կապալով վերցնել հողամասեր և ձեռնարկություններ, փոխառություններ անել (կնքել) և ընդհանրապես ամենայն տեսակի գործողություններ կատարել և համաձայնություններ կնքել, ընդունել նվիրատվություններ և



А. Мясникяна
17204-58

դատարանում հայցվորի ու պատասխանողի դերում դուրս գալ (դատել և դատվել):

4. Գյուղ. Փոխ. Օգնութ. Ընկերությունը պատասխանատու յե իր պարտատերերի (պարտքերի) հանդեպ յուր ամբողջ գույքով: Ընկերության պարտքերի դիմաց չի կարելի հայցը ուղղել ընկերության անդամների սեփհականության գույքերի վրա:

5. Ընկերությունը ունենում է սահմանված ձևի իր կնիքը:

6. Գյուղացիական Փոխ. Օգն. Ընկերությունները, սույն կանոնադրությամբ սահմանված նպատակները իրագործելիս, իրենց գործունեության ընթացքում ազատվում յեն պետական և տեղական բոլոր տեսակի հարկերից, տուրքերից, ինչպես և ընկերության գործերի համար գրաշմանիշեր և դատական տուրքեր ներկայացնելուց:

## 2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՅԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Գյուղական բնակչության ինքնագործունեության հիմունքներով գործող Գյուղացիական Փոխ. Օգն. Ընկերության մոտակա նպատակն է լինելու,

ա) Գյուղում (շրջանում գավառում) կազմակերպել և իրագործել համայնական (սոցիալական) ապահովությունը, ամենայն տեսակի օգնություն ցույց տալով զինվորական ծառայության մեջ յեղողների ընտանիքներին, հաշմանդամներին, տարերային և սոցիալական արհավիրքներից ու աղետներից տուժած գյուղի սակավազոր (թույլ) բնակչությանը, այրիներին, վորբերին, հիվանդներին և ընդհանրապես չքավոր գյուղացիներին ու կարիքի մեջ ընկած (նեղը ընկած) անձանց:

բ) Պաշտպանել ընկերության անդամների և վորբերի տնտեսական և իրավական շահերը։

գ) Պայքարել անտեր ու անտիրականության, չքավորության (աղքատության, ուզվորության), պոռնկության և արբեցողության դեմ։

դ) Գյուղացիների մեջ զարգացնել և ամրացնել ինքնագործունեության և առողջ ձեռնյերեցության հիմունքները, կազմակերպելով համայնական փոխօգնություն և աջակցել գյուղի ու շրջանի համայնական կազմակերպությունների գործունեությանը (Կոոպերացիային, հիվանդանոցներին, դպրոցներին և այլն)։

ե) Աջակցել զարգացնելու և ամրացնելու գյուղում կոոպերացիան, հաշմանդամների աշխատանքային միությունները, տարածել գյուղատնտեսական և հասարակական գիտելիքները և համախմբել սակավազոր ու միջակ գյուղացիներին կոլեկտիվ աշխատանքի հասարակ և պարզ ձևերի շուրջը, իսկ մասնավորապես միջոցներ ձեռնարկել, գյուրացնելու սակավազոր և միջակ գյուղացիների անդամագրությունը կոոպերատիվներում։

զ) Աջակցել պետական մարմիններին Գյուղ. Փոխ. Ոգն. Ընկերությունների շրջաններում գոյություն ունեցող հաշմանդամային հիմնարկներին, հիվանդանոցներին, դպրոցներին, մանկատներին, մանկական մսուրներին, ձրի ճաշարաններին (սեղանատներ), խրճիթ-ընթերցարաններին և այլն կահավորելու և մատակարարելու գործում, իսկ հնարավոր դեպքում համապատասխան մարմինների թույլատվությամբ և նոցա հսկողության տակ, այդպիսիները հիմնել ու իրենց հաշվով պահել։



է) Ստեղծել փոխադարձ ոգնության դրամական և մթերային ֆոնդեր։

ը) Մասնակցել՝ պետական, հասարակական և մասնավոր հաստատությունների և անձանց կողմից գյուղացիներին ոգնություն հասցնելու համար տրվող միջոցների բաշխման և ոգտագործման գործում, ինչպես և բաշխել այն գումարները, վորոնք անմիջապես հանձնվում յեն Փոխոգնության Ընկերություններին։

թ) Գյուղացիական սակավազոր բնակչության շահերը պաշտպանելու նպատակով՝ Փոխադարձ Ոգնության Ընկերությունները ձգտելու յեն. Խորհրդային և կոոպերացիային պաշտոնները գրավելու համար առաջ քաշել իրենց գործունյա անդամների թեկնածությունը։

## 3. ՈԳՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ (ՏԵՍԱԿՆԵՐԸ)

8. Գյուղացիական Փոխադարձ Ոգնության Ընկերությունները իրենց աշխատանքները տանում յեն թե գյուղացիական բնակչության համայնական ինքնոգնություն (կազմակերպումն հանրային վարուցանքսի, բարելավումն գյուղացիության կենցաղի, նիստ ու կացի, ստեղծումն և պահպանումն հանրոգուտ հիմնարկների, հաշմանդամատների, դպրոցների։ մսուրների, հիվանդանոցների, մանկապարտեզների և այլն) և թե կարիքավոր առանձին անձանց անհատական ոգնություն հասցնելու ուղղություններով։

9. Գյուղացիական Փոխ. Ոգն. Ընկերությունների հասցրած ոգնությունները կարող յեն լինել դրամական։ մթերային, աշխատանքային և իրավական (իրավաբանական) ու կարողեն լինել վերադարձնելի կամ անվերադարձ, ըստ վորում.

ա) Դրամական օգնությունը հասցվում է փոխատվությունների կամ նպաստների ձևով։

բ) Տնտեսական օգնությունը հասցվում է կենդանի և մեռյալ ինվենտարով, վորպիսին տրամադրվում է ժամանակավորապես օգտվելու համար, սերմացվով և հողերը պարարտացնող նյութերով, միջնորդելով, վոր արտոնություններ տրվեն փայտեղեն և այլ նյութեր ստանալու և այլ տեսակի միջոցներով ըստ հայեցողության ընկերության կոմիտեյի։

գ) Աշխատանքային օգնությունը հասցվում է վար ու ցանքսի, հունձի, շենքեր կառուցելու և այլն աշխատանքների ժամանակ բանվոր ձեռքեր տրամադրելով, շաբաթ և կիրակնօրյակներ կազմակերպելով և այլն։

դ) Իրավաբանական օգնությունը հասցվում է ընկերության անդամների, վորբերի, այրիների, կարմիր բանակայինների ընտանիքների և այլ անկարող քաղաքացիների (գյուղացիների) անտեսական և իրավական շահերը պաշտպանելով (հսկել, վոր խնամակալները և այլ հոգաբարձուները մատնադրվեն ժամանակին և կանոնավոր, արգելել, վոր ապօրինաբար չվտարվեն բնակարաններից, հետևել, վոր անկարող գյուղացիների և կարմիր բանակայինների ընտանիքներին օրենքով տրված արտոնությունները ճշտությամբ տրամադրվեն և այլն)։

10. Նշված օգնության տեսակների կարգը, հիմքը և չափը սահմանում է ընկերության կոմիտեն՝ հավանությամբ կամ վորոշմամբ ընկերության անդամների ընդհանուր ժողովի։



## 4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ ՅԵՎ ՆՐԱ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

11. Գյուղացիական Փոխ. Օգնության Ընկերության անդամներ յեն ներկայանում (հանդիսանում) Ընկերության գործունեության շրջանում գտնվող 18 տ. հասակի հասած յերկու սեռի այն անձինք, վորոնք բանվորների և գյուղացիների խորհուրդներում պատգամավորներ ընտրելու իրավունքն են վայելում։

12. Ընկերության մեջ մտնողները (անդամագրվողները) միանվագ մուծում են անդամակցական մուտքի վճար և հետագայում ըստ կարգի պարբերական մուծանքներ են կատարում։ Այդ մուծանքների չափը և կատարելու կարգն ու ժամանակը վորոշվում է ընկերության ընդհանուր ժողովում։ Վճարները (մուծանքները) սահմանվում յեն յուրաքանչյուր առանձին տնտեսության համար, պարտադիր կերպով հաշվի առնելով նրա կարողության աստիճանը ըստ վորևե ընդհանուր նշանի, ընդունված ամբողջ Փոխ. Օգն. Ընկերության համար, ըստ հողերի, անասունների քանակի, ընտանիքի կազմի (աշխատավորների թվի) և այլն։ Ընկերության անդամներն անհրաժեշտ դեպքերում, համաձայն ընդհանուր ժողովի վճռի, ընկերության կոմիտեների վորոշմամբ, պարտավոր յեն տալու իրենց թե անձնական աշխատանքը (բանելու) և թե իրենց կենդանի և մեռյալ գյուղատնտեսական ինվենտարը (անասուններն ու գործիքները) ընդհանուրին կամ ընկերության սուր կարիք ունեցող անդամներին ժամանակավորապես օգտագործելու համար։

**Ծանոթություն.**—Սակավազոր տնտեսություններին պիտի արտոնություններ տրվի,

վոր նրա իրենց մուծումները կատարեն մաս-մաս, կամ այդպիսիների մուծումների չափը պետք նվազեցնել, կամ պետք նրանց իսպառ ազատել մուծում կատարելուց յեվ կամ հնարավորություն տալ, վոր նրա մուծումի փոխարեն անձնական աշխատանք կատարեն (բանեն), իսկ ավելի ունեվոր տնտեսությունների մուծումների չափը պետք ավելացնել։

13. Փոխ. Օգն. Ընկերության անդամները բոլոր այն դեպքերում, յերբ վորևե կարիքի մեջ յեն ընկնում կամ տարերային և սոցիալական արհավիրքներից (աղետներից) վնասվում (հրդեհ, կարկտահարություն, հեղեղ (սելաֆ), անբերքություն, անասունների համաճարակ (կոտորած), կողոպուտ (թալան) և այլն) իրավունք ունեն ընկերությունից և նրա անդամներից օգնություն պահանջելու, վորպիսին կատարվում է սույն կանոնադրությամբ նախատեսնված կարգով և գյուղ. համայնական Փոխ. Օգն. կենտրոնական Կոմիտեյի ցուցմունքներով։

14. Ընկերության այն անդամները, վորոնք հաճախորեն չեն յենթարկվել ընկերության կոմիտեյի օրինական պահանջներին ու ընդհանուր ժողովների վորոշումներին, ինչպես և իրենց գործունեությամբ ընկերությանը վնաս տվողները, ընդհանուր ժողովի վորոշմամբ կարող են վորոշ ժամանակով արտաքսվել ընկերությունից, վորի մասին հայտարարվում է Ընկերության գործունեության շրջանում ի գիտություն։

15. Ընկերության անդամներն իրավունք ունեն ընդհանուր ժողովում բողոքել ընկերության կոմիտեյի սխալ վորոշումների դեմ։

16. Արգելվում է Ընկերության անդամների մուծանքները և տուրքերը հարկադրական յեղանակով վարչական կարգով գանձելը, ինչպես և արգելվում է նույն յեղանակով ստիպել, վոր ընկերության անդամները աշխատանքային, փոխադրական և այլ վորևե պարտավորություն (պահկություն) կատարեն ընկերության և նրա անդամների օգտին։ Ընկերության անպարտաճանաչ անդամների վրա դրած պարտականությունները հարկադրական յեղանակով կատարել տալու համար, յեթե ապարդյուն յեն անցնել նախազգուշացումները և գործ դրած ընկերական ազդեցությունը՝ հայց է (գործ է) սկսվում ժողդատարանում, վորի վճիռը իրագործվում է (ի կատար ածվում) օրենքով սահմանված ընդհանուր կարգով։

## 5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

17. Գյուղացիական Փոխ. Օգ. Ընկերության միջոցները կազմվում յեն.

ա) դրամով յեվ նյութով կատարվող միանվագ (մուտքի) և պարբերական անդամակցական վճարներից (մուծանքներից)։

բ) Փոխադարձ օգնության համար Սոցիալական Ապահովության մարմինների այլ հաստատությունների և կազմակերպությունների ու անձանց կողմից տրվող դրամական և նյութական միջոցներից։

գ( Համաձայն գոյություն ունեցող օրենքների Սոցիալ. Ապահովության մարմինների կողմից Գյուղ. Փոխ. Օգն. Ընկերություններին հանձնվող անտերունի, լքյալ, ինչպես և դատարանական վճիռներով ու վարչական կարգով զրավված գույքերից։

դ) Ընկերության պատկանող կամ կապալով վերցրած գույքերից և ձեռնարկություններից, ինչպես և

համայնական վար ու ցանքսից ստացվող յեկամուտներից ու հասույթներից:

յե) Կամավոր դրամական և նյութական նվիրաբերություններից:

զ) Պատահական մուտքերից:

18. Գյուղացիական Փոխ. Օգն. Ընկերությունը իր անդամների կարիքները հոգալու նպատակով. իրավունք ունի կապալով (իջարով) վերցնելու գյուղատնտեսությունը ոժանդակ ձեռնարկություններ, ինչպես օրինակ, գյուղատնտեսական գործիքների, վերանորոգումներ անող արհեստանոցներ, գյուղատնտեսական մթերքները վերամշակող ձեռնարկություններ, անասունների ցեղը ազնվացնող կայաններ (ցլակայաններ), զանազան գյուղատնտեսական գործիքները վարձով տվող հիմնարկներ, ձիթահանքեր, ածխագործարաններ, համայնական գորրնոցներ, թեյարաններ, ճաշարաններ և այլն: Հիշատակված ձեռնարկությունները ազատվում են բոլոր տեսակի թե համապետական և թե տեղական հարկերից և տուրքերից յեթե բացառապես հոգում են Փոխ. Օգն. Ընկերության և նրա անդամների կարիքները, իսկ յեթե այդ ձեռնարկությունները հոգում են մասամբ և կողմնակի անձանց, (վոչ ընկերության անդամների) կարիքները, այն դեպքում նրա յենթակա են հարկի և տուրքի, սակայն պահպանելով 1923 թ. դեկտեմբերի 7-ի (Տեղեկատու Ս.Խ.Հ.Մ. Կենտգործկոմի №9, հոդ. 274) դեկրետով սահմանված արտոնությունները: Այն դեպքում, յերբ այդ ձեռնարկությունները յենթարկվում են համապետական հարկերի, նրա կարող են Գավ. Գործկոմների վորոշմամբ ազատվել տեղական հարկերից և տուրքերից ու այն



կապալավարձերից, վոր վճարում են տեղական մարմիններին:

19. Ընկերության դրամական և նյութական ֆոնդերը ծախսվում յեն ընկերության կոմիտեյի ձեռքով՝ բացառապես սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների վրա և չեն կարող վորևե ուրիշ նպատակների (կարիքների) համար ծախսվել: Իշխանություն և վոչ մի մարմին իրավունք չունի ընկերության միջոցները կարգադրել: Ընկերության միջոցների ծախսման օրինականության վրա հսկողություն ունենալու իրավունքը պատկանում է բարձր աստիճանում կանգնած Գյուղ. Փոխ. Օգնության Ընկերության Կոմիտեներին, Գյուղխորհուրդներին և շրջանային ու Գավգործկոմներին:

**Ծանոթություն.** Փոխ. Օգն. Ընկերության միջոցները սույն կանոնադրությամբ չ նախատեսված նպատակներով ծախսողները պատասխանատվության յեն յենթարկվում Ս. Խ. Հ. Մ. քրեյական օրենսգրքի 105 յեվ 106 հոդվածներով:

## 6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՄԸ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

20. Գյուղացիական Փոխ. Օգն. Ընկերության վարիչ մարմիններն յեն. Ընկերության անդամների ընդհանուր ժողովը (իսկ շրջանում լիազորների ժողովը) և Ընկերության Կոմիտեն:

Ընդհանուր ժողովը (շրջանում լիազորների ժողովը) Գյուղ. Փոխ. Օգն. Ընկերության ղեկավար բարձր մարմինն է հանդիսանում: Ընդհանուր ժողովները լինում են հերթական, վոր հրավիրում է Կոմիտեն վոչ պակաս, քան տարին մեկ անգամ, և արտակարգ

վորը հրավիրվում է կոմիտեյի առանձին վորոշմամբ կամ վերստուգիչ հանձնաժողովի պահանջմամբ (հոդ. 26) և կամ Ընկերության անդամների վոչ պակաս 1/4-ի գրավոր հայտարարությամբ: Գյուղական համայնքի Փոխ. Օգն. Ընկերության ընդհանուր ժողովը հրավիրվում է նաև Գյուղխորհրդի և Գյուղ.Փոխ. Օգն. Ընկերության բարձր աստիճանում կանգնած Կոմիտեների կողմից: Լիազորների ժողովը հրավիրվում է Գավգործկոմի և բարձր աստիճանում կանգնած Փոխ. Օգն. Կոմիտեյի պահանջմամբ:

Ընդհանուր ժողովում դրվելիք հարցերի և ժողովի օրվա մասին Գյուղխորհուրդը և Գավգործկոմը ծանուցվելու յեն նախորոք (առնվազն ժողով գումարելու օրվանից յերկու որ առաջ):

**Ծանոթություն.**— Ընդհանուր ժողովը առաջին իսկ անգամ օրինական է, յեթե ժողովում ներկա յեղողների թիվը կազմում է Ընկերության բոլոր անդամների կեսը: Առաջին անգամ հրավիրված ժողովը պահանջվող թվով անդամներ չլինելու հետեվանքով չկայանալու դեպքում, հրավիրվում է յերկրորդ ընդհանուր ժողովը, բայց վոչ շուտ, քան առաջին ժողովից յերկու շաբաթ հետո: Յերկրորդ անգամին հրավիրված ժողովը, անկախ մասնակցող անդամների թվից, օրինական է յեվ այդպիսի ընդհանուր ժողովի վորոշումները պարտադիր յեն Ընկերության բոլոր անդամների համար թե ներկաների յեվ թե բացակայողների:

21. Շրջանային Գյուղ. Փոխ. Օգն. Ընկերությունները գործում յեն շրջանի գյուղական Փոխ. Օգն. Ընկերությունների կողմից ընտրված լիազորների ժողովների միջոցով: Մյուս բոլոր դեպքերում շրջանային



Փոխ. Օգն. Ընկերությունները առաջնորդվում յեն գյուղական Փոխ. Օգն. Ընկերությունների համար սահմանված պարտադիր կանոններով և վորոշումներով:

22. Գյուղական գյուղացիական Փոխ. Օգն. Ընկերության Կոմիտեն հանդիսանում է Ընկերության գործադիր (կատարող) մարմինը և ընտրվում է Ընկերության ընդհանուր ժողովում մեկ տարի ժամանակով: Կոմիտեն իր միջից ընտրում է նախագահ և նրա փոխանորդ (տեղակալ) կամ նախագահություն:

**Ծանոթություն 1.** Կոմիտեյի հանցավոր կամ զեղծարար, ինչպես յեվ վնասատու կամ ապիկար (անգործունյա) անդամները, Ընկերության ընդհանուր ժողովի վորոշմամբ՝ կարող յեն ժամանակից շուտ (տարին չլրացած) հեռացվել կոմիտեյի անդամությունից յեվ նույն իսկ Ընկերությունից համաձայն սույն կանոնադրության 14 հոդվածի:

**Ծանոթություն 2.** Ընդհանուր ժողովի վորոշմամբ կոմիտեյի անդամները կարող յեն վարձատրություն ստանալ:

23. Ընկերության Կոմիտեյի նիստերը տեղի յեն ունենում ըստ կարիքի, բայց վոչ սակավ, քան շաբաթը մեկ անգամ: Կոմիտեն բոլոր դեպքերում և ամենուրեք հրապարակ է գալիս իբրև ընկերության ներկայացուցիչ առանց վորևե առանձին հավատարմագրի:

Կոմիտեն պարտավոր է յուրաքանչյուր ամիս իր գործունեյության մասին հաշիվ տալ Ընկերության ընդհանուր ժողովում և Գյուղ. Փոխ. Օգնութ. Ընկերությանց ավելի բարձր կանգնած Կոմիտեներին: Կոմիտեն պատասխանատու յե իր բոլոր գործունեյությունների և Ընկերության դրամական միջոցների սխալ ծախսումի համար:

**Ծանոթություն.** Հաշվետվության ձևը (յեղանակը) յեվ կարգը սահմանվում են Գյուղացիական համայնական Փոխ. Ոգն. Կենտրոնական Կոմիտեյի կողմից։

24. Կոմիտեն, գործելով ընդհանուր ժողովի ցուցումներով, հաշվի յե առնում կարիքավոր գյուղացիների տնտեսությունները, կարմիր բանակայինների ընտանիքների տնտեսությունները, հաշմանդամներին, անտերունչ մնացածներին, չքավորներին, այրիներին, վորբերին և այլն։ Կոմիտեն պահում ե դրամական և նյութական մուտքի և յելքի (մտից և յելից) մատյաններ, նյութեր ե պատրաստում ընդհանուր ժողովի համար, ներկայացնում ե ընդհանուր ժողովին ի հաստատություն մուտքի և յելքի նախահաշիվները և իր գործունեյության ծրագիրը, առաջարկներ ե անում Փոխ. Ոգնության տեսակների, չափերի և ձևերի մասին, ձեռնարկություններ բանալու և կազմակերպելու մասին, շինություններ գնելու, ծախելու և վարձով (կապալ) տալու մասին, փոխառություններ անելու մասին և այլն։

25. Կոմիտեյում դրված հարցերը վճռվում են ձայների մեծամասնությամբ։ Ընդունված վճիռները գրի յեն առնվում։ Կոմիտեյի ամբողջ գրագրությունը կատարում են Գյուղխորհրդի ծառայողները։ Սակայն Կոմիտեն անհրաժեշտության դեպքում, ընդհանուր ժողովի համաձայնությամբ, կարող ե հրավիրել քարտուղար (գրագրությունը վարելու համար) և անհրաժեշտ մասնագետներ (հաշվապահ և այլն)։

## 7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐՍՏՈՒԳՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼԸ

26. Ընկերության ամբողջ հաշվետվությունը վերստուգելու, կանխիկ գումարները և ամբողջ գույքը և կոմիտեյի բոլոր դրամական ու տնտեսական գործերը ստուգելու համար Ընկերության ընդհանուր ժողո-



վում ընտրվում և Վերստուգիչ Հանձնաժողով 3 հոգուց բաղկացած մեկ տարի ժամանակով։

27. Վերստուգիչ հանձնաժողովը իրավունք ունի ստուգումներ կատարելու ամենայն ժամ։ Ընկերության հերթական ընդհանուր ժողովներում առնվազն (վոչ պակաս) 3 ամիսը մեկ անգամ զեկուցումներ ե անում Ընկերության գործունեյության և նրա հաշիվների (կատարած ստուգումների) մասին։

28. Ընկերության գործունեյությունը բազմակողմանի վերստուգման յենթարկելու իրավունքը պատկանում ե բարձր ընկերության կոմիտեներին (շրջանային, գավառական, կենտրոնական) և պետական վերահսկիչ մարմիններին։

## 8. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՓՈԽ. ՈԳՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹ. ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

29. Ընկերությունների վրա դրված պարտականությունները ավելի հաջողությամբ կատարելու համար ընտրողական սկզբունքներով, կազմում են Գյուղ. Փոխ. Ընկերությունների շրջանային, գավառային և կենտրոնական կոմիտեները, վորոնք գործում յեն Սոցիալական Ապահովության մարմինների հետ համերաշխությամբ և նրանց հետ միասին։ Հիշյալ կոմիտեների պարտականությունները, կազմակերպելը և նոցա գործունեյության կարգը վորոշում ե Սոցիալական Ապահովության Կոմիսարիատը։

30. Գյուղ. Փոխ. Ոգն. Ընկերությունների միջև մշտական կապ պահելու, գործունեյության և աշխատանքների ընդհանուր ծրագիր մշակելու, փորձերով փոխանակվելու և այլ նպատակներով հրավիրվում յեն (կազմակերպվում յեն) շրջանային, գավառային և հանրապետական համագումարները և խորհրդաժողովները (կոնֆերանսները)։

31. Գյուղ. Փոխ. Ոգ. Ընկերությունների հիմ-
նումը, նոցա լուծարքի յենթարկվելը գրանցելու
հանուր և պատգամավորական ժողովները ...

խորհրդաժողովները և համագումարները կազմակերպելու հարցերը ինչպես և ընկերությունների և նույն միությունների և համագումարների գործունեությունը կարգավորվում յեն Սոցիալական Ապահովության ժողկոմատի մշակած և հրատարակած կանոններով և հրահանգներով.

32. Համաձայն սույն կանոնադրության Գյուղ. Փոխ. Օգ. Ընկերությունների գրանցումը կատարվում Սոց. Ապ. ժողկոմատի մարմիններում:

## 9. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԵՐԸ ԼՈՒԾՄԱՆ ՅԵՆԹԱՐԿԵԼԸ

33. Ընկերությունը լուծման և յենթարկվում խորհրդային իշխանության մարմինների կամ ընկերության անդամների ընդհանուր ժողովի վորոշմամբ:

Առաջին դեպքում, յերբ ընկերությունը լուծվում է Խորհրդային Իշխանության մարմինների վորոշմամբ, լուծարքը կատարվում է Սոցիալական Ապահովության ժողկոմատի ցուցմունքներով, իսկ յերկրորդ դեպքում լուծարքը կատարվում է յերբ լուծարքի մասին կայացրած ընդհանուր ժողովի վորոշումը ուժ է ստանում, յեթե վորոշումը կայացնելիս ժողովին մասնակցել է ընկերության բոլոր անդամների $2/3$ մասը և յեթե նա ընդունվել է հետագա իրար հետևող յերկու ընդհանուր ժողովներում, բայց վորում այդ ժողովները կայանալու յեն մեկը մյուսից 2 շաբաթ հետո:

34. Լուծարքը կատարվում է վորոշումը կայանալուց հետո մեկ ամսվա ընթացքում: Փոխ. Օգն. Ընկերության բոլոր գործերը, գույքը և դրամական միջոցները Ընկերության անվիճելի պարտքերը ծածկելուց (վճարելուց) հետո, անցնում յեն բարձր կանգնած Փոխ. Օգն. Ընկերության կոմիտեյի տրամադրության տակ համաձայն սույն կանոնադրության 31-րդ հոդվածի հրատարակված հրահանգի կարգով:

334.7
Կ-21
ՀՀ Ազգային գրադարան
NL0209217